Արձանագրություն N 2

<<ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/9>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի

ք. Երևան 15 հունվարի 2024թ.

Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա. Ավագյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Առուշանյան

Ա. Քյոսեյան

Քարտուղար՝ Լ. Ադամյան

1. <<ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2023/9>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդին ներկայացված հայտերը eauction.armeps.am համակարգում /այսուհետ, Համակարգ/ բացվել են 2024թ. հունվարի 15-ին, ժամը 10:00-ին:

2. Հանձնաժողովն արձանագրեց, որ հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:

3. Հանձնաժողովն արձանագրեց, որ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի վերաբերյալ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ստացվել:

4. Էեկտրոնային հակադարձ աճուրդը համակարգում սկսվելու է հունվարի 16-ին, ժամը 10:00-ին:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը՝ 2024թ. հունվարի 17-ին, ժամը 14:30:

<< ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/9>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն

ք. Երևան 17 հունվարի 2024թ.

Ժամը՝ 14:30

6. << ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/9>> ծածկագրով ընթացակարգի հակադարձ աճուրդը սկսվել է Համակարգում, 2024թ. հունվարի 17-ին, ժամը՝ 10:00-ին:

7. Սահմանված ժամկետում էլեկտրոնային աճուրդ ընթացակարգին հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

N	**Մասնակցի անվանումը**	**Տվյալները**
1	«Բիլդինգ Կապիտալ» ՍՊԸ	Հր. Քոչարի փ. 4, Արաբկիր 0033 Երևան հեռ. 077325718
2	«Բի Լայն» ՍՊԸ	ՀՀ, ք.Երևան, Խանջյան 50, հեռ. +374 10 57 88 25
3	«Էլմարկետ» ՍՊԸ	ք.Երևան , Աճառյան 33/4, հեռ. 011800000/215
4	«Պատրոն ՌՄ» ՍՊԸ	ք. Երևան, Վարդանանց 18/2, հեռ. 010 54-43-48, 095 51-99-17

8. Մասնակիցների կողմից առաջարկված գները հետևյալն են.

չափաբաժնի համարը	Գնման առարկայի անվանումը	Չափման միավորը	Քանակը	Գնման առարկայի գնման հայտով հաստատված ընդհանուր գին	Մասնակցի անվանումը և աճուրդի արդյունքում ներկայացված վերջին գնային առաջարկը (22 դրամ)*							
					«Բիլդինգ Կապիտալ» ՍՊԸ		«Բի Լայն» ՍՊԸ		«Էլմարկետ» ՍՊԸ		«Պատրոն ՌՄ» ՍՊԸ	
					Գնային առաջարկը		Գնային առաջարկը		Գնային առաջարկը		Գնային առաջարկը	
					առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ	առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ	առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ	առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ
1	Համակարգչային պլանշետ	հատ	2789	326313000	209250000	251100000	220000000	264000000	232000000	278400000	285872500	343047000

***Եթե մասնակիցը ԱԱՀ վճարող չի հանդիսանում, ապա լրացվում է միայն ''առանց ԱԱՀ'' սյունակը**

9. «Պատրոն ՌՄ» ՍՊԸ կողմից ներկայացված հայտը աճուրդի ամփոփումից հետո համակարգը ավտոմատ մերժել է, քանի որ ներկայացված գնային առաջարկը գերազանցել է գնման առարկայի գնման հայտով հաստատված գնման ընդհանուր գինը:

10. Էլեկտրոնային աճուրդն ամփոփվելուց հետո արձանագրվեց, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից է հանդիսանում «Բիլդինգ Կապիտալ» ՍՊԸ -ն:

11. Հանձնաժողովը որոշեց առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված ժամկետում:

<< ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/9>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն

ք. Երևան 23 հունվարի 2024թ.

Ժամը՝ 14:30

12. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում արձանագրվեց, որ ուղարկված հայտը Համակարգում կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան և ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, սակայն ներկայացված փաստաթղթերում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

- Դիմում-հայտարարության մեջ ռուսերեն լեզվով անվանումը նշելու փոխարեն լրացվել է հայերեն անվանումը:
- չի նշվել Համակարգչային պլանշետի ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը, արտադրողի անվանումը:
- անհրաժեշտ է հստակեցնել տեխնիկական բնութագիրը՝ բացառելով առնվազն, ոչ պակաս բառերը, ինչպես նաև տեխնիկական բնութագրում նշել համակարգչային պլանշետի անկյունագծի չափը:

13. Հանձնաժողովը որոշեց 1 աշխատանքային օրով կասեցնել նիստը և «Բիլդինգ Կապիտալ» ՍՊԸ-ին առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները՝ ներկայացնել նոր դիմում-հայտարարություն, շտկել տեխնիկական բնութագիրը, նշել համակարգչային պլանշետի ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը, արտադրողի անվանումը:

14. Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա 2024թ. հունվարի 25-ին, ժամը 11:00, ք. Երևան, Կառավարական տուն 3 հասցեում, 615 աշխատասենյակում:

<< ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/9>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն

ք. Երևան 25 հունվարի 2024թ.

Ժամը՝ 11:00

15. Հանձնաժողովն արձանագրեց, որ սահմանված ժամկետում «Բիլդինգ Կապիտալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են շտկված դիմում-հայտարարությունը և առաջարկվող ապրանքի ամբողջական նոր նկարագիր, ուստի հանձնաժողովն որոշեց շարունակել գնահատման աշխատանքները:

16. Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա 2024թ. փետրվարի 02-ին, ժամը 16:00, ք. Երևան, Կառավարական տուն 3 հասցեում, 615 աշխատասենյակում:

<< ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/9>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն

ք. Երևան 02 փետրվարի 2024թ.

Ժամը՝ 16:00

17. Հանձնաժողովն արձանագրեց, որ սահմանված ժամկետում «Բիլդինգ Կապիտալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկված դիմում-հայտարարությունը համապատասխանում է, իսկ առաջարկվող ապրանքի շտկված ամբողջական նկարագրի տեխնիկական բնութագրիրը չի համապապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես չեն ներկայացվել համակարգչային պլանշետի առաջարկված մոդելի չափսերը և քաշը, ինչպես նաև հրավերի տեխնիկական բնութագրում համակարգչային պլանշետների մարտկոցի համար սահմանված Li-Po 6820 mAh հզորության փոխարեն ներկայացված մոդելի տեխնիկական բնութագրում առաջարկվել է Li-Po 20000 mAh հզորություն:

Գնահատող հանձնաժողովը, հաշվի առնելով արձանագրված վերոնշյալ անհամապատասխանությունները, որոշեց «Բիլդինգ Կապիտալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել այն, ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, գնման ընթացակարգը հայտարարվեց չկայացած:

18. Ներկայացված հայտերի հիման վրա, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը, <<**ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2023/9**>> ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «Բի Լայն» ՍՊԸ-ի և «Էլմարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը:

19. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Ա. Ավագյան

Հանձնաժողովի անդամ _____ Ա. Առուշանյան

_____ Ա. Քյոսեյան

Քարտուղար՝ _____ Լ. Ադամյան